

Արձանագրություն N 2-05/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի
մայիսի 12-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Բաղդունց Գ.Ռ., Հակոբյան Ռ.Ս., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Պողոսյան Ա.Ա., Դավթյան Շ.Ա., Ավետիսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Զաքարյան Գ. Է., Ծատրյան Ս.Բ. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ) և Հարությունյան Ռ.Մ.:

ՕՐԱԿԱՐԳ

1.«Գետնանուշ», «Պոմիդոր» և այլ մշակաբույսերի ծրագրերի մասին:

Լսեցին 1-«Գետնանուշ», «Պոմիդոր» և այլ մշակաբույսերի աճեցման ծրագրերի իրականացման աշխատանքների մասին ներկայացրեց պրոռեկտոր՝ Ս.Գալստյանը: Նշվեց, որ փորձարարական նպատակներով ձեռք է բերվելու 200կգ գետնանուշի սերմացու: Տարածաշրջանում նորույթ համարվող այս մշակաբույսի մշակությունը կունենա կարևոր նշանակություն: Նախ, դաշտային փորձերի միջոցով կուսումնասիրվեն դրա մշակման տեխնոլոգիական նրբությունները, կմշակվեն ստացված բերքից սննդի և դեղագործության համար մեծ պահանջարկ ունեցող յուղի ստացման, իսկ բավարար քանակությամբ սպիտակուցներ և ճարպեր պարունակող մնացորդներից՝ հրուշակեղենի արտադրության հումքի տեխնոլոգիա: Միաժամանակ, ձեռք է բերվելու բարձր բերքատվությամբ, լավագույն համային հատկություններով օժտված պոմիդորի չորս և տաքդեղի երեք հայկական սորտերի սածիլներ ու այլ մշակաբույսերի սերմանյութ: Մշակության նպատակը կլինի պարզել Արցախի հանրապետության տարբեր հողակլիմայական պայմաններում այդ սորտերից յուրաքանչյուրի արդյունավետությունը, կմշակվի կոնկրետ կլիմայական պայմանների համար տնկման, պարարտացման, ոռոգման և այլ ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման արդյունավետ եղանակներ և արտադրությանը կառաջարկվեն ստացված բերքից պահածոների արտադրության արդյունավետ եղանակներ: Այս ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է հողատարածք վարձակալել և գյուղտեխնիկա ու աշխատուժ ներգրավել:

Որոշեցին 1.1-Հավանություն տալ «Գետնանուշ», «Պոմիդոր» և այլ մշակաբույսերի ծրագրերին և հաստատել:

1.2-Նշված ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար (հողի վարձակալություն, գյուղտեխնիկայի և աշխատուժի ներգրավում), կնքել համապատասխան պայմանագրեր և համաձայնագրեր:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թորմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան

